Հավելված N 64
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի
գլխավոր քարտուղարի 2020 թվականի մարտի 4-ի ՈԳՔՀ/65-2020 հրամանի

ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ, ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի (այսուհետ՝ Մարզպետարան) ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի (այսուհետ՝ Բաժին) ավագ մասնագետ (այսուհետ Մասնագետ) (ծածկագիրը՝ 93-3.3-Մ5-2)

1.2. Ենթակա և հաշվետու է

Մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի ավագ մասգանետներից մեկը:

1.4. Աշխատավայրը

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, Աբովյան 71

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. իրականացնում է Հայաստանի Հանրապետության Արմավիրիի մարզում (այսուհետ՝ Մարզ) կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների հիմնահարցերի, դրանց լուծմանն ուղղված ծրագրերի մշակման հետ կապված աշխատանքները.
2. մասնակցում է Մարզում կանանց և երեխաների առուվաճառքի (թրաֆիքինգ) հիմնահարցերի ուսումնասիրության և զոհերի սոցիալական վերականգնմանն ուղղված ծրագրերի մշակման հետ կապված աշխատանքներին.
3. քննարկում է ոստիկանության համապատասխան ծառայությունների հետ մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասների կողմնորոշման խնդիրները, համատեղ աշխատանքներ է իրականացնում իրենց երեխաների վրա բացասական ներգործություն ունեցող, հակասոցիալական վարքագիծ դրսևորող ծնողների (կամ նրանց օրինական ներկայացուցիչների) հետ.
4. մասնակցում է Մարզի համայնքների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների (ԽՀՀ) նիստերին և այն դատական նիստերին, որտեղ քննարկվում են երեխայի իրավունքները և շահերը, տրամադրում է մասնագիտական կարծիք և խորհրդատվություն.
5. իրականացնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված (ԿԴԻՀ) երեխաների (նրանց ընտանիքների) կենսապայմանների և կարիքների

գնահատման, ԿԴԻՀ երեխաների դեպքի վարման աշխատանքները.

6. իրականացնում է խնամակալության և հոգաբարձության մարմնի հետ միաժամանակ երեխային ծնողներից վերցնելու, տեղավորելու և դատարան հայց ներկայացնելու աշխատանքները՝ երեխայի կյանքին կամ առողջությանը վտանգող անմիջական սպառնալիքի դեպքում.
7. իրականացնում է առանց ծնողական խնամքի մնացած (ԱԾԽՄ) երեխաների և ԱԾԽՄ երեխաների թվին պատկանող անձանց տարածքային հաշվառման հետ կապված աշխատանքները.
8. իրականացնում է Բաժնի կողմից կազմված եզրակացությունների մշակման հետ կապված աշխատանքներին.
9. իրականացնում է Մարզի համայնքների ԽՀՀ գործունեության մոնիտորինգային գնահատում՝ ԽՀՀ աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով, մասնակցում է սեմինարների, գիտաժողովների.
10. իրականացնում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ԿԴԻՀ երեխաների «Մանուկ» տեղեկատվական ենթահամակարգի վարման հետ կապված աշխատանքները.
11. մասնակցում է ընտանիքի, կանանց և երեխաների առողջության պահպանմանն ու սոցիալական պաշտպանությանն ուղղված մարզային և տեղական նշանակության ծրագրերի ձևավորման աշխատանքներին.
12. բացահայտում է անչափահաս մայրերին և նրանց երեխաների պետական գրանցման իրականացման հարցում իրականացնում ուղղորդման աշխատանքներ:

Իրավունքները՝

1. որպես երեխա որդեգրել ցանկացող անձ հաշվառված քաղաքացիներից ընդունել դիմում և անձնական փաստաթղթեր, լրացնել կենսապայմանների ուսումնասիրության ակտը, հավաքել անհրաժեշտ տվյալներ, կատարել երեխայի կարիքների գնահատում.
2. մասնակցել համայնքների ԽՀՄ-ների նիստերին, համագործակցել կրթական և բժշկական հաստատությունների, ՏԻՄ-երի, ոստիկանության և այլ կառույցների հետ, պահանջել անհրաժեշտ բժշկական փաստաթղթեր, կատարել տունայց, կազմակերպել բազմամասնագիտական քննարկումներ, տալ մասնագիտական կարծիք:

Պարտականությունները՝

1. ստուգել տրամադրված փաստաթղթերի ամբողջականությունը, պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, ուսումնասիրել քննարկման արդյունքները և կազմել ԿԴԻՀ երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագրեր, անհրաժեշտության դեպքում ստուգել անչափահաս երեխայի կամ ծնողի առողջական վիճակը և տրամադրել մասնագիտական խորհրդատվություն, եզրակացություն.

2. ստուգել ԽՀՄ-ներից և այլ կառույցներից ստացված տեղեկատվությունը, վարել տարածքային հաշվառման մատյանը, տրամադրել տեղեկատվական նյութեր, ուղեցույցներ, պատրաստել լիազորագրեր, պարբերաբար կատարել տունայց, ուսումնասիրել կենսապայմանները, հավաքել և լրացնել անհրաժեշտ

փաստաթղթերը, կազմել դեպքի նկարագիր, որդեգրել ցանկացող անձին տալ որդեգրելու հնարավորության մասին դրական կամ բացասական եզրակացություն

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

1	Ուղղություն	Առողջապահություն և սոցիալական աշխատանք
2	Ոլորտ	Առողջապահություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ սոցիալական բնագավառում՝ առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաները

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաները

1. Բանակցությունների վարում
2. Բողոքների բավարարում
3. Ժամանակի կառավարում
4. Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման կամ մասնագիտական օժանդակության համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման կամ մասնագիտական օժանդակության շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին աջակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացմանն օժանդակության շրջանակներում:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի կառուցվածքային այլ ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև այլ համապատասխան մարմինների ներկայացուցիչների հետ ընդգրկվում է տվյալ մարմնի ներսում ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն: